

կը ծոխ: Զորին միւս կողմը քարաժայռին մէջ կը տեսնուին Ե. և Զ. դարուց ճգնաւորներու բնակած բազմաթիւ այրերուն բացուած քները: Այցելեցինք նաև Յովհաննէս Դամասկացի նշանաւոր վարդապետին գմբէթաղարդ և յատակը մոզայիք մասառը, նախապէս քարայր մը, ուր ան ապրած էր Ը. դարուն, և հոն ցոյց տուին մեզ անոր գերեզմանը: Ոմանց ըսածին նայելով՝ Դամասկացիին մարմինը փոխադրուած է Մոսկուս: Յետոյ երկու հարիւր աստիճաններէ վար իջանք, դէպ ի հեղեղատը, ուր Մար-Սարա ստոնորակ ջուր մը բղխեցուցած է. ջուրի ահագին ապառաժէ մը կաթկթելով այլ եւ այլ տեղերէն՝ կը լեցնէ երկու փոքր աւաղաններն և աւելորդը դուրս կը հոսի ճամբորդներուն համար: Զախէն կը տեսնուի այն հնամենի արժաւենին զոր Մար-Սարան իր ձեռքովը տնկած է ժայռի մը պատուուածքին մէջ, անկորիզ են անոր արմաւները. աւանդաբար կը պատմուի թէ երբ ծառը կը չորնար ուրիշ մը կը ծլէր անոր արմատէն: Փափաքեցանք այցելել Մար-Սարայի բուն իսկ ճգնարանը. կեդրոնական գաւթէն աստիճանով մը իջանք փոքրիկ պարտէզ մը, ուրկէ բարձրանալով տանիք՝ հասանք Մար-Սարայի մասառը, ամբողջութեամբ փորուած ժայռի մը մէջ: Դուռ մը որ կը բացուի մատրան անջրպետին մէջ, հազորդակցութիւն ունի այն քարայրին հետ, ուր Մար-Սարան կէս դարու միջոց անցուցած է իր ժամանակը ազօթքով և մեծ խտակրօնութեամբ: Այս քարայրին հետ կապակցութիւն ունի սիրուն աւանդովէպը ա՛յն առիւծին, որ երկար տարիներ բնակակից եղած է Մար-Սարայի, որուն մէկ մեծաղիւր նկարը՝ առիւծին հետ միասին, ճգնարանին դրան վրայ գետեղուած է: Ծճնարանին իբր առաստող կը ծառայեն իրարու վրայ դրուած վիթխարի քարեր, յատակն ալ ամբողջութեամբ մոզայիք: Աւարտելով մեր այցելութիւնը, շնորհակալութիւն յայտնեցինք մեզ առաջնորդող տեսչին և սուպընջական վանականներուն, և երեք ժամ միայն մնալով, Տէյր Տօզի վանքն ալ հանդիպելէ յետոյ, վերադարձանք Բեթղէհէմ: Մեր առած տեղեկութեան նայելով Մար-Սարայի միտքանութիւնը պատերազմէն առաջ կը բաղկանար 70 վանականներէ, ներկայիս անոնց թիւն է 30: Իրենց տարեկան ծախքն է 500 ոսկի, որ կը հայթայթուի վանքին ձեթաստաններէն եւ այգիներէն: Իրենք սակաւապէտ են և ոչխատաւոր. բնաւ միս չեն ուտեր,